# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ-ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

1700-ամեայ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմօրէն ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Քրիստոսի հաւատարիմ զինաւորիդ եւ Հայ Եկեղեցու բարեջան սպասաւորիդ՝ քահանայագործութեան Ձեր յիսնամեայ յոբելեանի առիթով:

Միրելի Սրբազան, ուրախ է Մեր հոգին այսօր շնորհաւորելու Ձեզ եւ հաստատելու, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսառատ անդաստանում Ձեր կէսդարեայ ծառայութիւնը արդիւնաւորուած է բազում բարի իրագործումներով: Հայ հոգեւորականի Ձեր առաջին քայլերից սկսեալ մինչ առաջնորդի բարձր ու պատասխանատու պաշտօնը Դուք առաջնորդուել էք հովուական կոչման ամենաբարձր գիտակցութեամբ եւ միշտ կրել Ձեր հոգում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ լուսոյ խորան Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը մաս յաւելելու տեսիլքը:

Հայրապետիս համար գոհունակութիւն է, որ Դուք քաջակորով ու եռանդաշատ հոգեւորականի բարի համբաւ էք վայելում ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմում՝ որպէս արդիւնք եւ վարձատրութիւն բազմամեայ անսակարկ սպասաւորութեան: Այսօր հաճոյքով

ենք յիշում յոբելեանական 2001 թուականին ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմ կատարած Հովուապետական Մեր անդրանիկ այցելութիւնը, երբ ի մօտոյ ծանօթացանք թեմական եւ համայնքային կառոյցների, թեմի հովանու ներքոյ գործող ազգային կրթօջախների, մշակութային միութիւնների ազգօգուտ գործունէութեանը, որ արդիւնքն են առաջնորդի պաշտօնում երեսնամեայ Ձեր քաջեռանդ ծառայութեան եւ վկայութիւնը՝ թեմի հայորդեաց առ Աստուած հաւատի եւ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին անկեղծ նուիրումի:

Բարձր գնահատանքով ենք անդրադառնում նաեւ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի կողմից անկախ մեր Հայրենիքում Ձեր նախաձեռնութեամբ իրականացուող բարեսիրական ձեռնարկներին, որոնք կոչուած են ծառայելու հայրենաբնակ հաւատաւոր հայորդիների, ծնողազուրկ ու կարիքաւոր երեխաների սոցիալական դժուարին խնդիրների լուծմանը: Լիայոյս ենք, որ ինչպէս ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմում, այնպէս եւ համայն աշխարհում մշտապէս պիտի զօրանայ հայրենաշինութեան սրբազան գործին մասնակցութիւն բերելու պատրաստակամութիւնը հայորդիների հոգիներում, որոնց ոգի ներշնչողներից ու խրախուսողներից էք նաեւ Դուք՝ Ձեր խօսքով ու անձնական օրինակով:

Սիրելի Սրբազան, Հայրապետական այսու Կոնդակով Մեր բարձր գնահատանքն ենք բերում քաջ հովուիդ եւ յաւարտ Ձեր ծառայութեան՝ իբրեւ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով մաղթում ենք, որ Բարին Աստուած հանապազ զօրացնի Ձեզ Ձեր կոչման մէջ եւ յաջողութիւններ պարգեւի Ձեր բոլոր բարի գործերին:

Թող Տէրը առատապէս օրհնի մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի, խաղաղ, անվրդով ու միշտ բարգաւաճ պահի մեր Մայր Եկեղեցին ու երկիր հայրենին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 2-ն Ապրիլի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 133